

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ**

ՈՐՈՇՈՒՄ

«13» դեկտեմբեր 2017թ. թիվ 19

**ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԿՅԱՆՔԻՆ ԿԱՄ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆԸ ՊԱՏՃԱՌՎԱԾ
ՎՆԱՍՆԵՐԻ ՀԱՏՈՒՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
2018 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետը, Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի կանոնադրության 34-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի 04.12.2017թ. հոգաբարձուների խորհրդի նիստի թիվ 4 արձանագրությունը՝ Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Հաստատել Զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի 2018 թվականի տարեկան բյուջեն՝ համաձայն սույն որոշման Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

**Զինծառայողների կյանքին կամ առողջությանը
պատճառված վնասների հատուցման
հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի նախագահ՝**

Վիգեն Սարգսյան

Հավելված

Հաստատված է

Ձինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի

Ձինձառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման հիմնադրամի 2018թ. տարեկան բյուջե		
գործառնական ծախսեր		
		2018թ
1	հատուցման գումարների վճարման հետ կապված	684,600,000.00
2	ստացված վարկերի, փոխառությունների դիմաց հաշվեգրված տոկոսները	0.00
3	հիմնադրամի կողմից բանկային ծառայությունների ստացման հետ կապված վճարները	1,000,000.00
4	հիմնադրամի աուդիտի եւ խորհրդատվական ծառայությունների դիմաց վճարներն, ինչպես նաև օրենքով սահմանված հաշվետվություններն ու տեղեկություններն հրապարակելու հետ կապված	0.00
վարչական ծախսեր		
1	հիմնադրամի աշխատակիցներին վճարվող աշխատավարձը եւ դրան հավասարեցված վճարները	0.00
2	հիմնադրամի պատշաճ գործունեության ապահովման համար անհրաժեշտ այլ ծախսեր	0.00
եկամուտ		
1	Հիմնադրամի ակտիվների կառավարումից ստացված զուտ եկամուտ	405,100,000.00
2	Մուտքեր՝ պարտադիր վճարներից	5,236,700,000.00

3	Կամավոր նվիրաբերություններ	81,300,000
---	----------------------------	------------

2017 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 19 որոշմամբ